

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Օգոստոսի 15, 2008թ.

Նոր հրատարակություն. «Յիշատակարան Սանահնոյ Վանից» գիրք

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ «Հայ Եկեղեցու պատմության սկզբնաղբյուրներ» շարքից լույս է ընծայել «Յիշատակարան Սանահնոյ Վանից (Սանահնի Բեօթուկը)» գիրքը՝ աշխատասիրությամբ Պարույր Մուրադյանի: Գիրքը հրատարակվել է մեկենասությամբ Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի:

Ժողովածուն ամփոփում է Սանահնի վանական կենտրոնին վերաբերող, նրա ներքին կյանքն ու արտաքին առնչությունները պարզաբանող այլազան նյութեր՝ հարստացված հավելվածային օժանդակ նյութերով: Առանձնակի կարևորություն ունեն Հայաստանի ուշ միջնադարյան տնտեսական պատմությանը վերաբերող վավերագրերը՝ նվիրատվություններ, տնտեսական տարաբնույթ հարաբերություններ արտացոլող փաստաթղթեր, Հայաստանի հյուսիսային գավառների տեղանվանությանը վերաբերող վկայություններ, քաղաքական և մշակութային կյանքի անդրադարձներ:

Գիրքն այս կարգի ժողովածուներն ուսումնասիրելու և հրատարակելու առաջնեկն է, որ հասցեագրված է պատմաբաններին, բանասեր-լեզվաբաններին, միջնադարյան Հայաստանի վանական և տնտեսական կյանքով ու պատմությամբ հետաքրքրվող մասնագետներին:

###